ԻԸ.

Թէ դու ի սըրտանց քըննես, նա կենցաղս յերակ խաբող է,
Աւուրք մի խընդալ կուտայ, բայց յերակ ի լաց կու պահէ.
Այի մարդն որ աւտայ սըմայ կամ աստէն իւր տուն կու շինէ,
Չաւտամ թէ նա  խելք ունի, աւատա՛ որ խիստ յիմար է:

Լ.

Թէ ուզես՝ հանգչիս, եղբա՛յր, անդէնին դարպաս դու շինէ.
Չիմըն հաւատոյ դու դիր ու յերակ անշարժ կու պահէ.
Չինչ որ քեզ բաժին հասնի, անդէնին դու զայն յօղարկէ՛.
Յորժամ ի քո տունն երթաս, նայ բարեօք քան զնուռն ի լին է:

ԼԱ.

Զով որ կու սիրէ Աստուած, նայ սակաւ մի աստ կու տանջէ.
Փորձէ թէ նա սէր ունի՞ առ Աստուած, չարին համբերէ՞.
Թէ զսէրն ի սըրտաց ունի առ Աստուած, նա խիստ յօժար է.
Տանջանքըն թըւի նըմա թէ իւղով զանձըն կ՚օծանէ:

ԼԲ.

Ով իմ խըրատիս լըսէ, նայ զանանց բարին ժառանգէ,
Անդէն պարզերես լինի ՚ւ ումեքէ իսկի չամաչէ.
Յորժամ յարութիւն լինի, փողն երկու ձայնիւ տի գոչէ.
Ով աստէն ճարտար կացեր, նա զԵկա՛յք ձայնըն տի լըսէ:

ԼԳ.

Աշխարհս է ի գով նըման, ով որ գայ՝ անթաց չիմընայ.
Յայս ծովս ես ի նաւ նըստայ, գընաց նաւս եւ ես չիմացայ.
Յեզեր մօտեցեր է նաւս, կու վախեմ՝ քարի դիպենայ,
Քակուի իմ աղուոր շինուածս ու տախտա՛կըս մէկմէկանայ:

ԼԴ.

Աստուած  կուսէն ծընալ, կոյսն ամբողջ եւ սուրբ մընացեալ,
Յինգ ըսքանչելեօք անճառ որ մարդկան անհաս երեւեալ.
Ի մի ենթակայ եկեալ հուրն Աստուած եւ հողն եռացեալ,
Մարմին եւ Ստեղծօղն երկնից՝ նոր խառնեալ եւ յոյժ միացեալ:

ԼԵ.

Զաջն աշխարհաստեղծ եղեալ ՚ւ ի խաչին զթեւըն տարածեալ.